

ԱՇՈՒՆԻ ՎԵՏՏ

Նըման արցունքիս շիթերուն ցրտին,
Դալուկ ծառերուն տերեւներն ամէն
Տխրութեամբ՝ հատիկ հատիկ դառնօրէն
Տառանումով յար ահա կը թափին,
Նըման արցունքիս շիթերուն ցրտին:

Սա ծառերուն տակ, դետինը նամէտ,
Դեղին ու մեռած, անձրեւով թրջած,
Տերեւները լայն ու զորդազարդուած,
Վըշտի պատկերներ կը դըծեն յաւէտ
Սա ծառերուն տակ, դետինը նամէտ:

Բարձրուղէ՛ ծառերն համակ սրգաւոր,
Լացող բընութեան զաղտնիքներուն հետ,
Սուրող հովերուն ևրդէն տխրաւէտ
Մերկացումն իրենց կ'ողբան մենաւոր,
Բարձրուղէ՛ ծառերն համակ սրգաւոր:

Սիւքը տխրաշունչ՝ թախծոտ աշունի,
Վըտիտ ծառերուն մէջէն մերկ, թափուր,
Սուգ ու հառաչանք կը փափսայ տըխուր
Ու զինք մեռցընող վըշտեր՝ զոր ունի:
Հովը տխրաշունչ՝ թախծոտ աշունի:

Փոքրիկ ածուներ հըմայիչ, աղուոր,
Աւա՛ղ, անհրապոյր եւ ամայացած
Իրենց կուրծքին մէջ աճող կենսաբաղձ,
Մահը վարդերուն կու լան վշտօրօր,
Փոքրիկ ածուներ հըմայիչ, աղուոր:

Հծծող աղբիւրիս վըտակը նիհար,
Ձերդ մահառներձի հեծքը վերջնական
Շնչահատ, լըռիկ ահա կու դայ ման,
Կ'անցնի սողալով ածուներէն յար,
Հծծող աղբիւրիս վըտակը նիհար:

Այսպէս ալ իմ ցուրտ եւ վշտոտ հոգիս
Հին աւերակին ցաւերը կու լայ:
Եւ նստած սիրոյս տաք մոխրին վըրայ,
Կը փնտռեմ սիրտն այն որ օրօրեց զիս,
Ու տաքցուց իմ ցուրտ ու վշտոտ հոգիս:

Ս. Փօլ, Միսնիստքա

ՀՐԱՑԱՅՏ

ԴԱՐՁՆԱԿ ՔԵԶԻ ՀԵՏ

ՊԱՅՐԸՆ

Ի ՎԻՅՆԷՆՈՎ - Մ.

Պանդոկին մէջ մեր, երբ ժամը ութն էր,
Կ'անէի միշտ կանդ արձանիդ ի տես.
Արաքսիս, ապշած, նայուածքն յառած վեր,
Հարց կու տար ինձի, կը ճանչնայի՞ր քեզ:

Այո՛, ըսելով՝ կը մընայի լուռ,
Բայց, նէ կարծէք ինձ դէմ իջած կրկէս՝
Կ'ուղէր անպայման դիտնալ թէ ե՛րբ, ո՛ւր,
Եւ ի՛նչ առիթով ճանչցած էի քեզ:

Պատմել կեանքդ անոր, այնքան դիւրին չէր,
Դիւրին չէր Բերթողդ երկիր բերել սին.
Սակայն, տեղին էր դէթ ըսել որ մեր
Ծանօթութիւնն էր շատ խոր եւ շատ հին:

Կ'անցնէր կեանքն այսպէս. օր մ'ալ լուսերէս
Աղջնակս ինձ դարձած՝ ըսաւ տրտմազին.
Հայրիկ, նայէ վեր, չե՞ս տեսներ, ի՛նչպէս
Կ'արիւնի շիթ շիթ ճակատն արձանին:

Արիւնն, իսկապէս, կ'իջնէր ճակտէն հուր,
Ու կաթկըթելով պատուանդանն ի վար,
Կ'երթար, կը լուծուէր հընոցին մէջ նուր՝
Ժուրայէն իջնող վերջալոյսին վառ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ